քայել Սերաստացուն, վոր հատուկ պատգամավորությունն ուղարկեց Հռոմ Արգար Թոքատեցու գլխավորությամբ և ապա առանձին ել թուղթ գրեց, յուր հպատակությունը հայտնելով Պիոս Դ. պապին։ Արդյոք քաղաքական կացության հետևանք եր այս, կաթոլիկ միսիոնարների թելադրության, թե հին՝ Ներսես մեծի և ուրիշների անունով տեսիլների ավանդության. հավանական և բոլորն ել իրենց բաժինն ունենան մի այդպիսի ձեռնարկության հղացման մեջ, բայց ամենից ավելի քաղաքական և տնտեսական ծանր կացությունը, վորի մեջ գտնվում եր ժամանակակից հայությունը։

ԺԶ. դարու առաջին կեսը Ոսմանյան աշխարհակալության հզոր ժամանակն եր, վոր հավասարապես սպառնալիք եր Պարսկաստանի հետ և արևմտյան քրիստոնյա պետություններին. այս վտանգի ազդեցության տակ կրկին զարթնում և թաչակրաց արշավանք սկսելու միտքը, բնականաբար պապի ղեկավարությամբ. պարսիկներն իսկ ղիմեցին Կարոլոս Ե.-ի ոգնության ընդհանուր թշնամու դեմ։ Այսպիսի քաղաքական պայմաններում հասկանալի է և Հայոց դիմումը։

Բայց ինչ վոր յենթադրաբար կարելի է ասել ԺԶ. դարու մասին, պարզ և ԺԷ. դարի նկատմամբ. պատահական չեր ամենևին, վոր հայ ազատագրության ղեկավարը Նախիջևանի շրջանից եր. ունիթոռները վոչ մի տեղ այնպիսի հաջողություն չեին ձեռք բերել արևելյան Հայաստանում, ինչպես այստեղ, Պռոշյանց և Իսրայել Օրիի հայրենիքում՝ Ճահուկ և Շահապունիք գավառներում. այնտեղ եր հաստատված նրանց յեպիսկոպոսությունը, այնտեղ եր նրանց կազմած կաթոլիկ համայնքների մեծագույն մասն իրենց հոգևոր կեդրոններով և վանքերով։ ԺԷ. դարը կաթոլիկ քարոզչության համար առավել հուսալից եր. Սեֆյանների տիրապետության ժամանակ շահ Իսմայելից սկսած ավելի ևս հաճախում են միսիոնարների յերթևեկությունը։ Շահ Աբասի և նորա հաջորդների որով Պարսկաստանի և յեվրոպական պետությունների մեջ սկըսվում են քաղաքական-վաճառականական հարաբերություններ. նրանք իրենց դեսպանություններն ունեին հաճախ և յենթարկյալ միաբանությունները, վորոնցից և դեսպաններ եին նշանակում. պապի ներկայացուցիչներն եին Կարմելյանները և ֆրանսիական կառավարությանը՝ Ճիզվիթները, հատկապես Լուդովիկոս ԺԴ.-ի ժամանակ։ Բայց նույն իսկ Պորտուգալիան, Լեհաստանը իրենց ներկայացուցիչներն ունեին և անտարբեր չեին իրենց քաղաքական նպատակների համար հովանավորել և կաթոլիկ պրոպագանդան։ Բազմաթիվ փաստերով կարելի է ցույց տալ, թե ինչպես պապերը, ֆրանսիական արքունիքը, բայց յերբեմն և մյուս պետությունները բանակցության մեջ են Պարսից հետ, վորոշ դյուրություններ և արտոնություններ ձեռք բերելու հայ յեկեղեցուց կտրված և կաթոլիկության հարած իրենց հավատակիցների համար։ Միաբարների յեպիսկոպոսներն իսկ հաճախ միջնորդ են արևմուտքի և Պարսից արքունիքների մեջ. 1619 թվին Ոգոստինոս Բաջենց թղթեր է բերում պապի, ֆրանսիական և իսպանական թագավորների կողմից և մատուցանում շահին քրիստոնյաների պաշտպանության համար։ Մատթեոս Հովհաննիսյան (Avanicensis) Պիրամոլիի հաջորդն իբրև յեպիսկոպոս, Կղեմես Թ.-ի, Լուդովիկոս ԺԴ.-ի և ապա Թոսկանալի դուքսի և Վենետկի ծերակույտի կողմից թղթեր է տանում Պարսից շահին 1669 թվին, յուր հետ ունենալով ծագմամբ հայ Պետիկին։ Շահը յուր կողմից նույն յեպիսկոպոսի ցուցմունքով դեսպան և ընտրում Անտոն Նազարյանին և Ազարիա Ճահկեցուն, վորոնք և տանում են շահի պատասխանները պապին, ֆրանսիական թագավորին և մյուսներին և նրանցից կրկին պատասխան բերում 1674/5 թվին։ Այս թղթերի բովանդակությունն եր շահի պաշտպանությունը խնդրել յուր հպատակ քրիստոնյաների համար, բայց հատկապես Նախիջևանի գավառի կաթոլիկ գյուղերի հարկերի թեթևության և տեղական իշխանավորների կեղեքման դեմ, նաև դաշնակցելու քրիստոնյա պետությունների հետ ընդդեմ ոսմանցիների։ Կղեմես Ժ. և Դոմինիկյանների կարգապետը 1673 թ. ուղարկում են Ֆրանցիսկոս Պիսկոպոսին իբրև քննիչ. մի անգամ արդեն նա 1664 թվին՝ ուղարկված եր Աղեքսանդր Է. պապի կողմից շահի մոտ Նախիջևանի կաթոլիկ գյուղերի հարկերի թեթևացման համար և այժմ կրկին անգամ 1675 թ. ներկայանում է շահին Անտոն Նազարի և Ազարիա Ճահկեցու հետ Ղազվինում և հանձնում յուր և յուր ընկերների բերած թղթերը։ Շահը ներում է կաթոլիկ գյուղերի 70.000 լիրա պարտքը և հանձնարարում նրանց Թավրիզի կուսակալի պաշտպանության ընդդեմ Նախիջևանի խանների։ Լուդովիկոս ԺԴ. 1682 թ. կրկին անգամ դիմում է շահին Ճիզվիթների ձեռքով յուր խոստովանահայր Լաշեզի միջնորդությամբ, Նախիջևանի կաթոլիկ հայերի դրության թեթևացման համար, վոր ավելի ևս սկսել եր ծանրանալ այս ժամանակներս։ Սերաստիանոս Քնապը 1685 թ. մատուցանում է շահին պապի, հռոմեական կայսեր, Լեհաց թագավորի թղթերը, վորոնց մեջ կրկնված եր նաև զինակցության գաղափարը։ Նախիջևանի յեպիսկոպոսը Պողոս Մկրտիչ 1692 թվին գալիս է պապի և Վենետկի սովորական ընծայական թղթերով յուր թեմը*։

Այս հանգամանքներն ու անցուդարձը, պապի և յեվրոպական արքունիքների կողմից, ստացված դրական ոժանդակությունները կաթոլիկ համայնքների համար, ճանապարհորդների, դեսպանների յերթևեկությունը չպետք է անխուսել մնային վոչ պապական հայության կողմից, վորոնք ավելի յենթակա եին տեղական խանների և իշխանների կամայականության։ Հավանորեն միսիոնարներն ել իրենց կողմից ավելի

* Ալիշան. Սիսական. 372—373, 377, 394, 398, 399, 400, 401։ Արարատ. 1915. 61.